ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

մասնավոր պահնորդական գործունեություն՝ ոչ պետական կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց կողմից սույն օրենքով սահմանված թիկնապահական և (կամ) պահնորդական գործունեության իրականացում.

թիկնապահական և պահնորդական գործունեություն՝ լիցենզավորման ենթակա գործունեություն, որն իրականացվում է պայմանագրային (վճարովի) հիմունքներով, ոչ պետական կազմակերպության կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով.

թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպություն՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա ստացած ոչ պետական կազմակերպություն.

թիկնապահ՝ պաշտպանվող անձի կյանքի և առողջության պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ.

պահնորդ՝ պահպանվող օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ.

պաշտպանվող անձ՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող ոչ պետական կազմակերպության հետ իր կամ պայմանագրում նշված անձանց կյանքի և առողջության պաշտպանություն իրականացնելու վերաբերյալ վճարովի հիմունքներով պայմանագիր կնքած ֆիզիկական անձ.

պահպանվող օբյեկտ՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի միջև կնքված պայմանագրի համաձայն պահպանության ենթակա գույք (տարածք).

թիկնապահական և պահնորդական ծառայություններ՝ պաշտպանվող անձանց և պահպանվող օբյեկտների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովող գործողությունների ամբողջություն.

անցագրային պայմանակարգ՝ պահպանվող օբյեկտ մուտքի և ելքի համար սահմանված կարգ, որն ապահովում է անձանց և տրանսպորտային միջոցների վերահսկելի մուտքը և ելքը պահպանվող օբյեկտ.

ներօբյեկտային պայմանակարգ՝ պահպանվող օբյեկտի ներսում անվտանգության ապահովման կարգ և դրա իրականացմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:

կայուն պահակետով պահպանություն՝ անմիջականորեն պահնորդի կողմից, ոչ ահազանգման համակարգի միջոցով, իրականացվող պահպանություն:

Հոդված 7. Թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացումը

1. Թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնում են տվյալ գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձինք՝ սույն օրենքով նախատեսված թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելու միջոցով:

2. Թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները.

1) ֆիզիկական անձի կյանքի և առողջության պաշտպանությունը հակահիրավական ոտնձգություններից (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ).

~~2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը պահպանությունը.~~

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի՝ կայուն պահակետով կամ տեսահսկման և ահազանգման համակարգերի միջոցով պահպանությունը և արագ արձագանքումը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) հատուկ կապի և տրանսպորտային միջոցների տրամադրումը:

3. Թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է իրականացնել նաև հատուկ կապով և տրանսպորտային միջոցով սպասարկում:

~~4. Պաշտպանվող յուրաքանչյուր անձի կարող է ուղեկցել միայն մեկ տրանսպորտային միջոց և երեքից ոչ ավելի թիկնապահ (այդ թվում՝ վարորդ-թիկնապահը):~~

4. Պաշտպանվող յուրաքանչյուր անձի տրանսպորտային միջոցով փոխադրումը կարող է իրականացվել միայն մեկ տրանսպորտային միջոցով, որի մեջ կարող է գտնվել երեքից ոչ ավելի թիկնապահ (այդ թվում՝ վարորդ-թիկնապահը): Արգելվում է պաշտպանվող անձին փոխադրող տրանսպորտային միջոցի ուղեկցումը մեկ այլ տրանսպորտային միջոցով:

5. Թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունն իրավունք չունի մատուցելու թիկնապահական կամ պահնորդական ծառայություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց:

6. Թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելիս թիկնապահները (պահնորդները) պետք է կրեն միասնական համազգեստ միայն աշխատանքային ժամերին: Դրանք պետք է տարբերվեն հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի աշխատողների համազգեստից:

Միասնական համազգեստի և տարբերանշանի նկարագիրը հաստատում է թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը:

7. Թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ղեկավարները, թիկնապահները և պահնորդներն իրավունք չունեն պաշտոններ զբաղեցնելու կամ աշխատելու այն պաշտպանվող անձանց մոտ կամ պահպանվող օբյեկտներում, որոնց հետ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը կնքել է ծառայություններ մատուցելու պայմանագիր:

8. Սույն հոդվածի պահանջները չկատարելը հիմք է տվյալ կազմակերպությանը թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման:

Հոդված 8. Թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզավորումը

1. Թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:

2. Իրավաբանական անձինք իրավասու են զբաղվելու թիկնապահական և պահնորդական գործունեությամբ միայն լիցենզիայի առկայության դեպքում:

~~3. Թիկնապահական և պահնորդական գործունեության համար տրվում է բարդ ընթացակարգով լիցենզիա:~~

3. Թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզիայի տրման պարտադիր պայման է հանդիսանում լիցենզիա ստանալու հայտը ներկայացնելու պահի դրությամբ համապատասխան որակավորում ունեցող առնվազն 10 աշխատողի (պահնորդի կամ թիկնապահի) հետ կնքված աշխատանքային պայմանագրերի առկայությունը:

4. Թիկնապահական և պահնորդական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան տալիս է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին):

5. Թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզավորման, այդ թվում՝ լիցենզիայի տրման, ~~լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման,~~ վերաձևակերպման, լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման և այլ ընթացակարգերն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

6. Մասնավոր պահնորդական կազմակերպությունները առևտրային այլ գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեն:

Հոդված 8.1. Լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանը

1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունները հաշվառելու, ոլորտի վիճակի և միտումների վերաբերյալ տեղեկությունները հավաքելու և վերլուծելու, ինչպես նաև ոլորտի քաղաքականությունը մշակելու նպատակով՝ Լիազոր մարմինը վարում է մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ նշվում են.

1) լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը և գտնվելու (գործունեություն ծավալելու) վայրը.

2) լիցենզիայի համարը.

3) լիցենզիան տալու ամսաթիվը և գրանցման համարը.

4) գործունեության կոնկրետ տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիա.

5) տեղեկություններ՝ տրված լիցենզիայի վերաձևակերպման, գործողության կասեցման կամ դադարեցման մասին.

6) կազմակերպությունում իրականացված ստուգումների վերաբերյալ տեղեկություններ.

7) սույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հաշվետվությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

Հոդված 25. Սոցիալական պաշտպանության երաշխիքները

~~1. Պահնորդի (թիկնապահի) կյանքն ու առողջությունը ապահովագրվում են գործատուի հաշվին:~~

1. Պահնորդի (թիկնապահի) առողջությունն ապահովագրվում է գործատուի հաշվին:

2. Պահնորդի (թիկնապահի) ապահովագրավճարը լրիվ ծավալով մտնում է պահնորդական ծառայությունների ինքնարժեքի մեջ:

Հոդված 28.1. **Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության գույքային պատասխանատվությունը**

1. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից թույլ տրված խախտման հետևանքով պատճառված իրական վնասի համար:

2. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը նախորդ տարվա ընթացքում մատուցված ծառայությունների համար գանձված վճարի կրկնակիի չափով, բայց ոչ պակաս, քան 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:»:

Հոդված 30. Պետական վերահսկողությունը թիկնապահական և պահնորդական գործունեության նկատմամբ

1. Մասնավոր պահնորդական կազմակերպությունների՝ սույն օրենքով նախատեսված գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնում է ~~ոստիկանությունը~~ Լիազոր մարմինը:

2. ~~Ոստիկանությունը~~ Լիազոր մարմինը հսկողությունն իրականացնում է լիցենզավորման մասին և զենքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև այլ ~~իրավական ակտերով~~ օրենքներով նախատեսված իր լիազորությունների շրջանակում:

3. Լիցենզավորման մասին և զենքի մասին օրենսդրությամբ և սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելիս ~~ոստիկանությունն~~ Լիազոր մարմինն իրավունք ունի մասնավոր պահնորդական կազմակերպությունում, ինչպես նաև պահնորդական ծառայություններ մատուցելու վայրում (~~պատվիրատուների համաձայնությամբ~~) բացառությամբ բնակարանների և բնակարանի հավասարեցված վայրերի, իրականացնելու ստուգումներ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Լիցենզավորված մասնավոր պահնորդական կազմակերպությունները յուրաքանչյուր կիսամյակ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը Լիազոր մարմնին են ներկայացնում կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվություն, որի ձևը և դրանում ներառվող տեղեկությունների ցանկը սահմանվում է Լիազոր մարմնի կողմից:

5. Մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից օբյեկտները պահպանելու կարգը և պայմանները սահմանում է Լիազոր մարմինը:

Հոդված 32. Նախազգուշացումը և խախտումը վերացնելու հանձնարարականը

1. Նախազգուշացմամբ արձանագրվում է խախտումը, և այդ մասին տեղեկացվում մասնավոր պահնորդական կազմակերպությանը:

2. Նախազգուշացումը նախատեսում է կատարված խախտումը ~~ոստիկանության~~ Լիազոր մարմնի սահմանված ժամկետում վերացնելու կամ ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ իրականացնելու հանձնարարական, որը պարտադիր կատարման ենթակա վարչական ակտ է:

3. Նախազգուշացումը կարող է կիրառվել, երբ տվյալ իրավախախտման համար լիզենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում նախատեսված չէ:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ հոդվածով լրացվող 28.1-ին հոդվածի 2-րդ մասի և 7-րդ հոդվածի 4-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: